

սանդղեան, Անտոնեան Միաբանութեան Վանահայր Հ. Թափալէ Միաբանեան Գեւորապետները, Նիկողայոս Ծ. Վ. Պաք-շեան, Հ. Մատթէոս Ծ. Վ. Գարակէօղեան, Հ. Վահան Վ. Ռեհանեան, Հ. Մեւրոյ Վ. Սահակեան, Հ. Սերովբէ Վ. Ապտուլահան, Հ. Պողոս Վ. Գաֆիթեան-ճեան, Յովհ. Վ. Թումայեան, Յովսէփ Վ. Պահապանեան, Կղեմէս Վ. Գահլէ-ճեան, Ներսէս Վ. Փափազեան, և Վիեն-նայի Կ. Պոլսոյ բոլոր միաբանները:

Ս. Պատարագի երգեցողութիւնները կը կատարէին մասնաւորապէս հրաւիրուած ընտիր դպիրներ. դպրապետն էր Քէ-րովբէ էֆ. Համամճեան. երգեցողութեանց կը մասնակցէր ազգ. ծանօթ բանասէր Դաւիթ էֆ. Խաչկոնց (Հասկաքաղ-Գիւն-բուկ) որ Բիւզանդիոն մէջ Միսիթար Արքայոց մանրամասն կենսագրութիւնը գը-րեց Վերջերս: Դպրապետ էֆ. ին ջանքե-րուն շնորհիւ, ճշմարտապէս գովասանքի արժանի էր երգեցողութեանց կանոնաւորութիւնը: Երգեցողութեանց կը մասնակցէր նաեւ Գահլէճեան Վ. Իր քաղցր ու ներդաշնակ ձայնով:

Ճաշու Ս. Գիրքէն ետք — զոր կար-դաց Դաւիթ էֆ. Խաչկոնց — Ներսէս Վ. Փափազեան, քարոզ մը խօսեցաւ, սա բնաբանով.

«Յի. Դու, մանուկ, մարգարէ Բարձրե-լոյն կոչեցիր»:

Փափազեան Վ. բացատրեց մարգարէ բառին աստուածային նշանակութիւնը, ի վեր հանեց Միսիթար Արքայոց գրական ու կրթական մեծ գործունէութիւնը, խօսե-ցաւ անոր սուրբ կենցաղին, քաջած հոգեկան ու մղաւորական ցաւերուն և տա-ռապանքներուն վրայ. ըսաւ թէ ինչպէս Միսիթար, այդ խանդոտ, քրիստոսավառ ու աստուածարեալ երիտասարդը մէկ քա-նի հոգիով պղտիկ միաբանութիւն մը հաստատած էր ամէնէն առաջ հոս, ի Կ. Պոլիս և թէ յետոյ ինչպէս Կ. Պոլիսէն փո-խադրուած էր Միւղէոն, Մեղէոնէն Վիեն-սիկ, Ս. Ղազարու կղզեակը և թէ վեր-ջապէս ինչպէս յաջողած էր հիմնել այս Միաբանութիւնը որ այսօր ազգիս գրա-կանութեան և գետնարակութեան գըլ-խաւոր որդան է: Ըսաւ նաեւ թէ ինչպէս Միսիթար Արքայ գացած էր Հռոմ, թէ ինչպէս ընդունած էր Ս. Բահմանյապե-տին օրհնութիւնը, որ անուանած էր զինք «այր առաքելին»: Փափազեան Վ. վերջա-ցուց իր քարոզը մաղթանք մը ընելով. ըսաւ թէ քանի որ ազգիս մէկ պղտիկ հատուածը կրցաւ համեմատաբար քիչ ժա-մանակամիջոցի մը մէջ գիտութիւնն ու լուսաւորութիւնը այսչափ տարածել, ան-շուշտ ասկէ շատ աւելի մեծ ծառայու-թիւններ պիտի մատուցուէր մեր դաս-տիարակութեան և գրականութեան, եթէ ամբողջ ազգը մէկ հոգի, մէկ մարմին ըլ-լար, կրնայ որ ազգիս մէկ պղտիկ հատուածը Հայ. Եկեղեցիներու միութիւնը Հռոմէական Եկեղեցիին հովանաւորութեա-նը տակ: Այս վերջաբանէն զգածուեցան մեր ազգակից եղբայրներն:

Ս. Պատարագի աւարտումէն վերջը, Ամեն. Կ.Պատրիարքը հանդիսաւոր թափո-րով առաջնորդուեցաւ վանքին դուռը, ուր նուազածունքու ընտիր խումբ մը Հա-միտէ քայլերգը կը զարնէր:

Թէև առաջուց որդուած էր ատենա-բանութիւնները և հանդէսին նկատած մա-սը պարտէզին մէջ կատարել, բայց օգին խոնարհութիւնը և անձրեւը այս կարգադ-րութեան արդեւք եղան:

Ամեն. Կ.Պատրիարքը Վանաստան դրան առջեւ, տաճկերէն լեզուով բարեմաղթու-թիւններ ըրաւ Վեհ. Սուլթանին արեւշա-տութեան, որուն երկսեւ հոծ բազմութիւն մը ձայնակցեցաւ «ամին»ներով, և ուր-կէ վերջ «Համիտիէ» քայլերգը կրկնուե-ցաւ, մինչ Ամեն. Կ.Պատրիարքը և հրա-ւիրեալները մոտին Վանաստան դահլիճը:

Հոն, Վանաստան Մեծաւոր Հ. Գալէմ-քեարեան գրաւոր համառօտ բանախօսու-

թիւն մը ըրաւ Վիեննայի Միսիթարեան Միաբանութեան Կ. Պոլսոյ ճիւղին վրայ, շատ հարեւանցի կերպով պատմելով թէ ինչպէս առանց բան մը ունենալու Պապիկ-եան Աքբան Թրիստէի մէջ կը հաստա-ուէր մէկ քանի ընկերներով և թէ յետոյ ինչպէս, դարձեալ ամէն ինչ հոն ձգելով, Թրիստէէն կ'ըլլար՝ վերջնական կերպով Վիեննայի մէջ հիմնելու համար այս Միա-բանութիւնը: Հ. Գալէմքեարեան չեչուեց՝ Վիեննայի Միսիթարեան Միաբանութեան թէ՛ Կ. Պոլիս և թէ՛ գաւառներու մէջ կրթական գործին համար ըրած ծառայու-թիւնները և մեծամեծ գործողութիւնները, միշտ Կ.Պատրիարքարանի հետ համերաշ-խութեամբ ապրելով:

Ոմանք այնպէս հասկցեր են որ Հ. Գալէմքեարեան «ճայրայեղութեան (°) մէջ է ինկի» ջանալով ապացուցանել թէ Վիեննական Հայք օգտակար եղած են Հայ Կաթողիկէ հասարակութեան և Հայ Կաթողիկէ Պատրիարքարանին, իբր թէ հակառակը պնդող կար» և կ'երեւակա-յին իբր թէ Հ. Գալէմքեարեան «գանդա-տած ըլլայ անոնցմէ որ անդիտանալ կ'ու-ղեն Վիեննական ճիւղը»: Երբեք — Հ. Գալէմքեարեան երկու բառով անցաւ Վի-եննայի մայրավանքին վրայէն և մի միայն «Ջանաց ապացուցանել» թէ Վիեննայի Կ. Պոլսոյ մէջ գտնուող Հայրերը ո՛րչափ օգ-տակար եղած են Հայ Կաթողիկէ Հասա-րակութեան՝ լոկ հոգեկան ու կրթական տեսակետներով: Եւ շարունակելով խօսքը՝ բացատրեց թէ ինչպէս Վիեննական Միա-բանութիւնը իր ծննդեան առաջին օրէն ի վեր մայրաքաղաքին և առ հասարակ ամ-բողջ Թուրքիոյ մէջ ապրելով՝ Հայ Կաթո-ղիկէ Հասարակութեան բարեգաղութան ու զարգացման գլխաւոր վստահաւորը ե-ղած է: «Դարուս սկիզբները Վիեննական Միաբանութեան անդամներն էին զո առ-բողջ Փոքր Ասիոյ խորքը կը պտտէին՝ ջանալով կրօնք ու գիտութիւն տարածել այդ տեղուանքը: Երբ, ասկէ գրեթէ ե-րեք քառորդ դար առաջ, Կայս. Բարձր Իրաւեով՝ Հայ Կաթողիկէ Հասարակու-թիւնը իբր զատ Վարդութիւն մը ու ան-կախ Պատրիարքութիւն մը ճանցուեցաւ Օսմ. Մեծաւոր Կառավարութեան կող-մէ՝ Օգոստոսիան Յաղթող Սուլթան Մահ-մուտ Խանի օրով, դարձաւ Վիեննական Միաբանութիւնը և մասնաւոր իր Արքա-հայրը՝ Արքիմանկէ Արքեպս. Աղաբեան (որ Աստուծոյ Մարիա Աննա կայսրուհին խոստովանահայրն էր) բաւական ծառա-յութիւններ ունէին այս մեծ գործին մէջ: Այս Միաբանութեան անդամները այնչափ ժողովրդական էին, որ իրենցմէ Հ. Գրի-գոր Վ. Էնքեթեան ժամանակ մը Պատ-րիարքութեան արժող յետաւ: Վիեննա-կան Հայրերն էին որ Չմիւռնիոյ Հայ Կա-թողիկէ Հասարակութիւնը զատեցին Լա-ստին Հասարակութիւնէն և զայն Կ. Պոլսոյ իրաւասութեան տակ գրին, և այսօր սքան-չացումով կը յիշուին և մինչև վերջը պի-տի յիշուին լուսահոգի Հ. Մաղաքիասի, Հ. Քերովբէի, Հ. Ստեփանի և ասոնց նը-մաններուն անունները»: Հ. Գալէմքեար-եան թուելով Վիեննական Միաբանութեան Կ. Պոլսոյ Հայրերուն մատուցած հոգեկան ու կրթական ծառայութիւնները, շնոր-հակալութիւն և երախտագիտութիւն յայտ-նեց Հասարակութեան Գիրքը. Կաթո-ղիկոսներուն և Պատրիարքներուն աջակ-ցութեան, որով զլրացուեցած — եւ զնա-հատած էին իրենց գործերը, — և խօս-քը յատկապէս ուղղելով Ամեն. Կ.Պա-տրիարքին, շնորհակալութիւն յայտնեց որ իր ներկայութեամբ հաճած էր պատուել Միսիթարի յիշատակը ու Վիեննայի Միա-բանութիւնը և մաղթեց Միաբանութեան Հաստատութեան երբորդ Դարը ոտը կո-խել, շնորհիւ Աստուծոյ և Մարիամ Կոյ-սին պաշտպանութեան, Երանելի Միսիթար Արքահայր բարեխօսութեան, Օսմ. Մեծա-հոգ Կայսրութեան հովանաւորութեան, Ամեն. Կ.Պատրիարքին աջակցութեան և

վերջապէս Միաբանութեան անդամներուն աշխատութեան ու անձնորոշութեան: Հ. Գալէմքեարեան չմոռցաւ նաեւ մասնաւոր շնորհակալութիւններ յայտնել ամբողջ Միաբանութեան կողմէ բոլոր եկեղեցա-կաններուն և աշխարհականներուն, որ ի-րենց ներդրումները պատուելով այս հանդէսը աւելի փայլ մը տուած էին ա-նոր: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ վարժարանին նախկին աշակերտներուն, որ ընդունելութիւնները կատարած և հան-դէսին կանոնաւորութեանը համար կարե-լի եղածին չափ հոգ կը տանէին:

Ի պատասխան՝ Ամեն. Կ.Պատրիարք Տ. Պողոս Էմմանուէլեան՝ կարճ, բայց ի-մաստալից բանախօսութեամբ մը զովեց Միսիթարի հոգիին, մտքին և ըրած գոր-ծերուն մեծութիւնը. ըսաւ որ թէև մարդ չի կրնար մարմնապէս անմահանալ այս երկրի վրայ, այլ կրնայ բարոյապէս ան-մահանալ. անո՛ւ այս կարգէն է Միսիթար. և մաղթեց որ Միսիթարի կրկին Միա-բանութիւնները շարունակեն միշտ այն խանդով ու աւելումով զոր կտակած է ի-րենց հայրը՝ Մեծն Միսիթար:

Անուհետեւ Հ. Գալէմքեարեան գե-րմաներէն բանախօսութիւն մը կարդաց Մ. Պրինսեքի և Մ. Բանֆիլիի ուղղեալ, ո-րուն պատասխանեց Աւստրիական դեսպա-նատան թարգմանը՝ շնորհակալութիւնը և գոհունակութիւնը յայտնելով: Մ. Պրինսե-քի խօսած միջոցին՝ նուագախումբը Աւս-տրիական քայլերգը կը հնչեցներ զրաէն:

Ապա ամբողջ ներկաները առաջնոր-դուեցան՝ կանխաւ պատրաստուած շքա-սեղանի մը շուրջը, ուր անուշեղէններով, ըմպելիներով և աղանդերներով մեծար-ուեցան:

Այս առթիւ մեր անկեղծ շնորհաւորու-թիւնները կը ներկայացնենք՝ Բանկալթիի Վիեննական Միաբանութեան, որ Միսիթար Արքահոգ երկհարիւրամիակ ազատք եղա-ծին պէս ստեղծու համար առանց ու եւ զոհոյթութիւն զանց առնելու, ամէն պէտք եղածը ըրին, որպէս զի հանդէսը կարելի եղածին չափ ու կարելի եղածին ալ աւելի շքեղ ու փառաւոր ըլլաւ:

Եւ վերջապէս առաջ, մեր Ամեն. Կ. Պատրիարքին հետ ի օրով կը մաղթենք որ «Աստուած՝ Միսիթար Արքահոգ կրկին Միաբանութեանց ժամերը օրեր ընէ, օրե-րը՝ շարաթիւն, շարաթիւնը՝ ամիսներ, ա-միսները՝ տարիներ և տարիները՝ դարեր»: Ե. Թ.

Վիեննայի լրագիրներուն մէջ կը կարդանք թէ Միսիթարեան Միաբանու-թեան 200ամեկի առթիւ Վիեննայի քա-ղաքապետը Տգդ. Լուէկէր Միսիթարեան-ներու հանդիսութեանց ներկայ գտնուե-ր է, և առ Գեր. Այալեան Արքահայրն խօ-սած շնորհաւորական ճառին մէջ ի մէջ այլոց ըսեց է. «Միսիթարեանները Վիեն-նայի մէջ ամէնուէն ծանօթ են. Վիեննայի ամէն անկիւններն անոնց վրայ կը խօս-ուի. դուք Վիեննա քաղքին հետ աճած և մի մարմին եղած էք, և Վիեննայի բը-նակիչները, որոնք Միսիթարեանները այն-չափ կը սիրեն, ձեր ամէն ուրախութիւն-ներուն մասնակից են: Անոր համար, իբ-րեւ Վիեննայի քաղաքապետ, պարտաւա-նութիւն ունիմ անձամբ Միաբանութեանը 200ամեակը շնորհաւորելու»: Տգդ. Լուէ-կէր վանքէն միկնած ժամանակ՝ դրան առջեւ խոնած ահագին բազմութիւնն իր գոհունակութիւնը յայտնեց է՝ «Կեցցէ՛ Լուէկէր» գոչելով:

ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹԻՒՆ

Ներկայիս կը յայտնենք մեր խաբին շնորհակալութիւնն այն ամէն Բարձրա-տիճան Եկեղեցական Հայր, Ազգային և Ուսումնական Վարդութեանց, Մեծա-պատիւ Աշխարհականաց, Ազգային թեո-թեոս Գարգելի իմբազարութեանց և մեր նախկին աշակերտաց, որոնք ամսոյս 9ին

Վանաստան մէջ կատարուած Միսիթար-եան Միաբանութեան 200դ տարեդարձի հանդիսին անձամբ կամ ներկայացուցիչ-ներով մասնակից ըլլալով՝ հաճեցան իրենց թանկագին համակրանքն ցուցնել Միա-բանութեան: Պարտք կը համարինք ա-ռանձին շնորհակալութիւն յայտնել Մե-ծապատիւ Մկրտիչ էֆ. Թօգալթեանի և մեր վարժարանին Մեծապատիւ նախկին աշակերտաց, որոնք հանդիսիս առթիւ հանդիսականաց տրամադրութեան տակ դրուած շքասեղանը (buffet) նուէր ըրած էին:

Մեզի ցոյց տրուած սրտաբուխ համակ-րանաց, և թէ՛ հանդիսադրաց և թէ՛ հան-դիսականաց թանկագին ուրախութեանն իթէ բուռն ցաւ մ'եկաւ խառնուեցաւ յա-նակեկալս և հակառակ մեր զգուշու-թեանց, ցանկալի է որ նոյն աղին հա-մակրանաց մէջ պատշաճօրէն խղուած ըլլար այն իոկոյն, և կամ գէթ այժմէն, և օրեւան հանդիսին ամէն հանդիսակցիս-րուն համար հաւասարապէս ցանկալի նշա-նակութիւնը մնար ընդ միշտ:

Վանաստան
ՀԱՐՑ ՄԻՍԻԹԱՐԵԱՆՑ ՎԻԵՆՆԱՅ
Ի Կ. Պոլիս
Բանկալթի, 12/25 Սեպտ. 1901

ԱԶԳԱՅԻՆ

Կ-Բաթրիգ բիւթպ. էֆ. հազրէթէրէ-նին Բոմատաքի վէթիլի Գեր. Գօհուհեան Պետրոս Գերապայժառ. եազաղըմըզ վէհն-լէ, բաղար իրթէսի կիւնի Տէրիսատէթէ մուվասըթէթէ, Կաթողիկոսարանա էնմիշ տիր:

Միւսիթիւնի իրթիգպալ ինչին ըհապիւն իլէ ալսաման պազը զէվաթ՝ վարօրա կրթմիշլէր տիր:

Գօհուհեան Գերապայժառ. Կաթողիկո-սարանա մուվասըթէթիստէ, Կ-Բաթրիգ բիւթպ. էֆ. հազրէթէրէնին զիւարէթ իթ միշ տիր:

Խմալիա սէֆիլի ճէտիտի կէշէն կիւն Կաթողիկոսարանա կէշէթէ, Կ-Բաթ-րիգ բիւթպ. էֆ. հազրէթէրէնին իւսաէի զիւարէթ իլլէմիշ տիր:

Էնաի միւլազաթմա, Կ-Բաթրիգ վէ-թիլի Ար. Աւետիս Արքե. Արփիարեան տախի հազըր պուլունմուշ, վէ միւլազա-թը վազըա՝ հարմը սաաթ զատար իրթի-տաա իթմիշ տիր:

Բաղար կիւնի, Բուս բաթրիլի բիւթպ. իւլիւնիւ Եօվալիմ էֆ. հազրէթ-լէրինին իսաի կիւնիւ օլուուղունտան, Կ-Բաթրիգ բիւթպ. Էմմանուէլեան Պողոս էֆ. հազրէթէրի թարափնտան՝ Վէթիլ միւսիթէթէթէրին Ար. Աւետիս Արք. Ար-փիարեան ճէնապլէրիլէ էնգաթէ մէրխա-սալը ճէտիտի Արչիապատիւ Ղազարոսեան Կղեմէս Գերապայժառ վէթիթիսանիթ զարու քէհաւը Յովհ. էֆ. Շէհրեան՝ Ֆէշէր թաթրիթիսանէթիլէ աղիմէթլէ, բառիթի թէպրիթ ինչա իթմիշլէր տիր:

Բանկալթի Վիեննա Միսիթարեան թարթաթըր ըհապիլի միւսիթէթէթէթիսա թափընտան Գալէմքեարեան վէ Մէնէվիլ-եան Վրդ. Էր բաղար իրթիթի կիւնի Էր-մէնի թաթրիլի Ամեն. Օրմանեան Արաւ-դան հազրէթէրինէ կիւնէթէ, բաղար կիւնի զիւնէթէ պիլի հէյնէթի մախուսէ կէնտրիթէթիստէն տօլաւը պէհաւը թէ-շէթիլի, վէ Փափազեան Ներսէս Վրդ. ին քարողը հազըրտա իղհարը թէհասիթ իթմիշլէր տիր: Բարիք Սրբաղան տախի, մէղթիլ զիւնէթի մուճիլ օլուուղու ա-տէմը խօշուտիտէն տօլաւը թէհասիթիւ-նիւ պէհան իլլէմիշ տիր:

Թրապիլզօն Տիւեւեւը ումուլիէ նա-զըրը օլան վէ միլլէթիլի միւսիթէթէթա-նընտան պուլունտան Շապանեան Գրիգոր էֆ. Է, Իրան տէվէթի ճանիպիստէն Շահ ըրիթպէտէն Շիյր ումուլիտ նիւսը վէթիլ միշ տիր: Էֆ. ի միւսիթէթէթի պու վէթիլ իլէ թէպրիթ իտէրիլ:

Միւսիթէթէթա Գարակէօղեան Տիգ-րան էֆ. թարափընտան վաթիթի իտիլիլ

— Զրգան սէնէ թամիր խորմէմիչ օլան
 Էլ լարիսթան անօրրնտաքի իսթիհքետա
 րըն թամիրի խուսուսընա իրատէի սէնիէ
 ղէֆարտուր իյլէմիչ տիր :

—Էնդ արէ վրիտէթ ինն Օտման
դադարնոս կէջէտէ սէ կիպի հազմ
լար եազարագ, առ խուդեանարը վու
պուլուս, վէ Տէհէմէտ Տէտէ Թէքի
դարիթ յինտ 15 ճէշի վէ պիբ խալի 5
միասթ թէլէթ օլուի տոր:

347 Ն. լու մահէկէ նազլ օլունմուշար

Ուժգուր հրապարակ ճարտիչներ թե՛էմին
օլմապ իւրեր Օմանլը պանդաոր 100տ
քի. ֆալյուլէ Ֆրանսա, Վէ 100տէ 3 ֆ
յիշէ Սլմանիր տէվլէթի էհսալմնասան
իդ զըմլթմտէ պիր սիդատար թմաւնա իթ
տիր զլւ իւլպու էհսամ թե՛վտ օլուն
աղլէնէ քէֆալէթ Օլարապ ալլընէ
ստոնիւնէ ազլըր պուլունմազտար ալլըր թ
տիր օլունաս աղլէնիւն սիդատարը ալլըր
ճա թե՛էմինաթ աղլէպինին տէ սիզտ
սոխար :

Սահիպի իմթիեազ վե մեսուլը դազէր
ՅՈՎ ՀԱՆՆԻՍ ԹՕՐ ԼՅԵԼԵ